

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԲՆԱԳՐՈՎ ԶՊԱՀՊԱՆՎԱԾ ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ
ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ

1897 թվականի ամսանը ակադ. Ն. Մառը գործուղվել էր Աթոս՝ Իվերոն մայրավանքի ձեռագրական հավաքածոն ուսումնասիրելու։ Անդրադառնալով իր հիմնական անհիբներին, գիտնականը գրում է. «Աթոս ուղևորվելու իմ նախանշած զլիավոր աշխատանքը հին վրացական եկեղեցական մատենագրության, կարծում եմ, հիմնական հարցի շուրջ՝ հայ մատենագրության ազգեցության հարցը վրացականի վրա, նյութեր հավաքելն էր։ Այն նշանակություն ունի ոչ միայն վրաց մատենագրության համար, այլև հայկական, իսկ մասամբ էլ ատորականի համար։ Ինչպես երկում է, առանց այս մասնավոր հարցի լուծման, առանց վրաց մատենագրության վրա հայոց ազդեցության շափերի ու որակի լուսաբանության ոչ մի հնարավորություն շկա պատկերացնելու գրական ու առհասարակ Ասորիքի, Հայաստանի ու Վրաստանի քրիստոնեական-մշակութային հազորդակցման բնույթը»¹։

Հիշյալ առումով առանձնապես նշանակալի եղավ Իվերոնի հավաքածուի № 57 գրչագրի ուսումնասիրությունը։ Այն վարքագրական հուշարձանների ժողովածու է՝ Վարք սրբոց, գերազանցապես թարգմանված հայերենից։ Զեռագիր Խ դարի է, մագաղաթյա, նուսխուրի գրչության, ընդօրինակված ասոմթավրութի (երկաթագիր) գաղափար օրինակից²։ Այս ձեռագրում են պահպանվել մեր ներկա ուսումնասիրության առարկա հուշարձանները՝ «Բնիքեցումն երկու սուրբ եղբայր տղաների՝ Դավիթ և Տիրինանի» (էջ 302ր—308ա, այսուհետե կոչելու ենք՝ «Դավիթի և Տիրինանի վկայաբանություն») և «Վկայաբանություն ըվառ ինք սուրբ տղաների, որոնք սուրբ ավազանի մկրտությամբ նոգեռ եղբայրներ էին, իսկ ծնված՝ յուրաքանչյուրն իր մորից» (էջ 173ա—175ա, այսուհետե՝ «Վկայացիների վկայաբանություն»)։

Ն. Մառը մտադիր էր Աթոսի № 57 ձեռագրի և նրա բովանդակած նյութերի ուսումնասիրությանն անդրադառնալ հատուկ աշխատությամբ՝ «նվիրված վրաց հին մատենագրության վրա հայոց ազդեցության քննությանը»³։ Այդ իսկ գրքում էլ պետք է հրապարակվեն տպագրության պատրաստված բնագրերը։ Ցավոք, բաղմազբաղ գիտնականը շհասցրեց գրել ծրագրվող աշխա-

¹ H. Marr. Из поездки на Афон. СПб., 1899, стр. 10.

² Զեռագրի նկարագրությունը տես H. Marr. Агиографические материалы по грузинским рукописям Ивера, ч. I, СПб., 1900, стр. 47—72, նույն R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la Laure d'Iviron au mont Athos (Extrait de la „Revue de l'Orient Chrétien“, 1931—1934, p. 30—41). Հարկ է նշել, որ Բլեյկի ժամ ձեռագիրը նկարագրված է № 8-ի տակ։

³ H. Marr. Агиографические материалы..., стр. 47.

տությունը, իսկ իր կուահումներն ու եզրակացությունները մասամբ միայն հրապարակ բերեց: Այսպես, մեղ հետաքրքրող «Դավթի և Տիրիմանի վկայարանությունը» նա համարում էր «անկանակած հայկական ծագման», որը չհայ դրականությունից անհետ չբացել է», իսկ «վրաց մատենագրությունը թարգմանարար պահել է հայոց հին վարքագրության կորած հուշարձանը»⁴:

«Կողացիների վկայարանության» կապակցությամբ գիտնականը այլ կարծիք է հայտնել, այն համարելով «թերեւ ինքնուրույն վրացական ստեղծագործությունը»⁵: 1903 թվականին նա հրատարակեց վկայարանության բնադիրը, այն օժտելով ուսւերեն թարգմանությամբ ու կարճառու ներածականով: Այստեղ ի մասնավորի նշվում է, որ հուշարձանը առանձնակի կարևորություն է ներկայացնում քրիստոնեության մուտքի հետ կապված հանգամանքներ ըննելիս, քանի որ նրանում նկարագրված է քրիստոնեության և տեղական հեթանության պայքարը, սրբագրելով «քրիստոնեության՝ կայծակնալին արագությամբ տարածվելու» մասին եղած ավանդական պատկերացումները: Ընդ որում՝ «Ակներեւ է, հուշարձանը (իմա՝ Կողացիների վկայարանությունը—Պ. Մ.) շատ հին է, ինչ վկայվում է և լեզվի հնավանդությամբ ու գրչագրով (X դ.)»⁶:

Այսպիսով, բատ ակադ. Ն. Մառի «Դավթի և Տիրիմանի վկայարանությունը» թարգմանություն է հայերենից, իսկ «Կողացիների վկայարանությունը» թերեւ ինքնուրույն վրացական ստեղծագործություն է:

1902 թ. Աթոսի վրաց մայրավանքում պրապտումներ էր կատարում պրոֆ. Ա. Խախանաշվիլին: Նրա հանձնարարությամբ ընդօրինակվում են N 57 ձեռագրի բովանդակած վարքերից շատերը, այդ թվում նաև «Դավթի և Տիրիմանի վկայարանությունը» (տպագրվեց 1910 թվականին)⁷: Ա. Խախանաշվիլին և կարծում է, որ սույն երեք թարգմանություն է հայերենից, «շավանդված հայերեն բնագրով»⁸: Նոր և ուշագրավ է Ա. Խախանիշվիլու այն դիտողությունը, թե հայերեն բառերի առատությունը, ոչ հարթ ոճն ու խառնիխուռն ուղղվագրությունը վկայում են, որ «այդ վարքերը (խոսքը հիշյալ ձեռագրում եղածների մասին է—Պ. Մ.) հայերենից վրացերեն են թարգմանել վրացերենին ոչ կատարելապես հմտացած հայերը»⁹: Այս բնորոշումը, հարկավ, վերաբերում է նաև մեղ հետաքրքրող «Դավթի ու Տիրիմանի վկայարանությանը»:

Ինչպես արդեն նկատեցինք, ոչ Ն. Մառը և ոչ էլ Ա. Խախանաշվիլին արծարծվող բնագրերի հետ կապված հարցերը հատուկ քննության նյութ չեն դարձրել: Ն. Մառը իր նախնական դիտարկումներն է հրապարակել, մասնա-

⁴ «Որ վրացերեն տերսաք ներկա գետքում սովորական թարգմանություն է հայերենից,— պրում է Մառը,— զրանում համոզում են ինչպես բառագանձային ու ոճական հայկարանությունները, աշնողես և հուշարձանի իսկ բովանդակությունն ու շարադրանքի եղանելը, ի միջի ալլօց՝ դեռքերի թվագրումը բատ Հայաստանին տիրապետած օտարերկրացի թագավորների ու Հայոց կաթողիկոսների» (H. Marr. Из поездки... стр. 21).

⁵ Աշվ. աշխ., էջ 16:

⁶ H. Marr. Мученичество девяти отроков колаицев. ТР АГФ, т. V. стр. 53—61.

⁷ Աշվ. աշխ., էջ 54:

⁸ Материалы по грузинской агиологии (по рукописям X века), с предисловием издал А. Хаханов. М., 1910, стр. 72—77.

⁹ Աշվ. աշխ., էջ XXIII.

¹⁰ Աշվ. աշխ., էջ XXIV.

վոր ուսումնասիրությունը թողնելով իր ծրագրվող դրահին, իսկ Ա. Խախանիշվիլին՝ մեկ պարբերությամբ պարզապես ծանոթագրել:

«Դավթի ու Տիրիմանի վկայաբանության» համեմատաբար հանգամանաւ-լից բնագրագիտական գննությունը կատարել է ակադ. իվ. Զավախիշվիլին¹¹: Նրա կարծիքով Հուշարձանը թարգմանական է, գրված VIII դարից ոչ շուտ և վրացերենի թարգմանված IX դարին մոտիկ շրջանում»¹², քնզ որում «այս Հուշարձանը գրեթե ոչ մի պատմական արժեք չունի»¹³: Իվ. Զավախիշվիլին գտնում է նաև, որ Դավթի ու Տիրիմանի և Կողացի մանկանց վկայաբանությունների միջև որևէ առնչություն-ընդհանրություն չկա և որ «Կողացիների վկայաբանությունը» թարգմանական լինելու նշաններ չունի»¹⁴: Արձանագրելի է, սակայն, որ գիտնականը նման եզրակացոթյան է հանգում առանց բնադրագիտական անհրաժեշտ վկայակույնների, մի քանի, որ բնորոշ չէ նրա հիշյալ աշխատության մյուս հատվածներին:

«Կողացիների վկայաբանության» հետ կապված խնդիրներ արծարծված են իվ. Զավախիշվիլու մեկ այլ աշխատության մեջ ևս¹⁵, ուր այն համարվում է՝ «շատ կողմերով ուշազրավ» հուշարձան, գրված IX դարից ոչ վաղ, սակայն մեկ-երկու անգամ խմբագրված-վերանայված։ Գիտնականի եզրակացությամբ, վկայաբանությունը կարևոր աղբյուր է Վրաստանի պատմության, իրավունքի պատմության և եկեղեցական արարողության հին շրջանի պատկերի հետ կապված հարցեր լուսաբանելու համար։ Վկայաբանությունը դիտվում է իր և ինքնուրույն վրացական ստեղծագործություն։

Վարքագրական այս երկու հուշարձանների մասին այլ կարծիքի է ակադ. Կ. Կեկելիձեն¹⁶: Նա գտնում է, որ «Կողացիների վկայարանության» մեջ ներկայացված պատկերը քրիստոնեության հնագույն շրջանի է, վեցերորդ դարից ոչ ուշ», որի վկայությունն են՝ ժամասացության խիստ պարզունակությունը, արարողության իմաստով ժամորա (յօթօծ) տերմինի գործածությունը, գետում մկրտություն տոնելը և այլն¹⁷: Կ. Կեկելիձեն արձանագրում է նաև, որ այդ երկու վկայարանությունները խիստ աղերսվում են միայնաց, «ինչպես արտաքուստ, այնպես էլ բովանդակությամբ»¹⁸: Նույնական է նրանց ոճը, ընդհանուր է տերմինոլոգիան (օրինակ՝ Եցօ-խելի, Սույցլո-սովիելի, Ցուզօհո-մբավարի), գործողությունը երկու հուշարձանում էլ նույն՝ Տայքի միջավայրում է տեղի ունենում, զրեթե բնդհանուր է և ոյտժեն (մի դեպքում հարազատ եղբայրներ են, մյուսում՝ Հոգևոր, Երկուսում էլ մանկահասակ, երկուսում էլ հանուն քրիստոնեության նահատակվող, սպանողները՝ մերձավոր ազգականներ): Հետեւաբար, «կամ երկուսն էլ ինքնուրույն վրացական ստեղծագործությունները պահպանության մեջ մտնելու համար առաջարկ է առաջնահատությունը»:

“ ვანე ჯავახიშვილი, ძელი სომხური საისტორიო მწერლობა, ტფ., 1935,
გვ. 32-38.

12 *bif.* *wif.*, *kif.* 38,

13 *U.S.A.*

14 *Urgf. mifus., t. 37.*

¹⁵ ვანე ჯავაპიშვილი, ძელი ქართული საისტორიო მწერლობა, თბ., 1945, გვ. 61—66.

¹⁶ კორნელი. კავკასიის ქართული ლიტერატურის ისტორია, ტ. I, თბ., 1960, გვ. 516—520.

17. *V24L. m2fus., t2 517:*

18 *U24L. m2fus., b2 518.*

են, իններորդ դարից ոչ վաղ գրված... կամ թե՛ երկուսն էլ փնքնուրույն հայկական ստեղծագործություններ են, վրացերեն թարգմանված իններորդ դարից ոչ շուտ...»¹⁹: Գիտնականը հակված է զեսի երկրորդ և զրակացությունը, ուստի կարծում է, որ «Դավթի և Տիրիմանի վկայարանության» մեջ Հերակլ կայսեր անունը կարող է ընդմիջարկված լինել և վրացի թարգմանչի կողմից, իսկ մեկ այլ առիթով սույն երկը հիշատակում է վրաց թարգմանովան վարքերի շարքում²⁰: Կ. Կեկելիձեն նույնիսկ անհրաժեշտ է համարում նկատել, որ «առհասարակ իվ. Զավախիշվիլու գրութները, թե այս երկու հուշարձանները շեն մերձենում միմյանց ոճականորեն ու բովանդակությամբ՝ թյուրիմացության արդյունք են»²¹:

Արծարծվող վկայարանությունների կապակցությամբ բավականաշափ ինքնատիպ դրույթ առաջադրեց պրոֆ. Ի. Արուլաձեն, ըստ որի Տայքի աստիճանաբար վրացականացող հայ բնակչությունը «շահագրգոված էր հայոց վարքագրական հուշարձանների թարգմանության կողքին, գոյություն ունեցող ավանդությունների հիմքի վրա, ստեղծել տեղական, Տայքի հետ կապված նահատակների վկայարանության երկեր (զրքեր), փնչպես և հիշատակ սահմանել (կարգել) այդպիսիներին փրենց եկեղեցում: Այսպիսի գործունեության արդյունք պետք է լինեն, մեր եղբակացությամբ, Դավթի և Տիրիմանի ու Կողացիների վկայարանության երկերը»²²: Նա քերում է մի շաբթ բառ-տերմիններ, որոնք բնդհանուր գործածություն ունեն այս վարքերում և բնորոշ չեն նույն միջավայրում հայերենից կատարվող թարգմանություններին, իսկ որ այդ երկու հուշարձանն էլ բաղկեղնական հայերի ստեղծագործություն են՝ ապացուցում է «Դավթի և Տիրիմանի վկայարանության» մեջ պահպանված ակնարկումներով. եղելությունը թվագրվում է ըստ հայոց թագավորի ու կաթողիկոսի, Ներսեսը՝ կոչված է «սուրբ Հայր մեր» և այլն²³, Բայց միաժամանակ՝ «եթե Դավթի և Տիրիմանի վկայարանությունը հայերենի թարգմանություն ներկայացներ, այն ժամանակ, անկատած, բնագրի ազգեցությամբ այստեղ էլ ինչ որ մի տեղ ի հայտ կգար առանց թարգմանության թողած որևէ հայերեն տերմին»²⁴: Նույն միջավայրում ու շրջանում է ստեղծվել նաև «Կողացիների վկայարանությունը». «Նրանց գոյացումը IX դարի կեսերից է հնարավոր, Տայքի այն հայ բնակչության ծոցում, որը վրացիների հետ դավանական կատի մեջ էր գտնվում և, ինչպես երեսում է, վրաց մշակույթի այնպիսի մեծ ազդեցություն է եղել, որ հայրենի մատենագրության հուշարձանների տարածման համար դրանք (խոսքը թարգմանական մյուս երկերի մասին է—Պ. Մ.) վրացերենի են թարգմանել և միաժամանակ՝ սեփական ստեղծագործությունն էլ (նկատի ունի մեզ հետաքրքրող երկու վկայարանությունները—Պ. Մ.) այդ նույն լեզվով շարադրելը»²⁵:

Այսպիսով, Ի. Արուլաձեն մերժում է Ն. Մատի, իվ. Զավախիշվիլու և

19 Անդ:

20 Տ. ՃՈՃՈԾՈՅ. ՅԵՐԱԳՐԵՅՈ.... Ը. V, ՅՅ. 123. Հմմա. «ՅԵՐԱԳՐԵՅՈ...», Ը. X, ՅՅ. 130.

21 Տ. ՃՈՃՈԾՈՅ, մՅ. յարու. Ըստ. ՍՊ. օԵՒ. 1, 518, ՑԵ. 2,

22 ՕՂՈՅ ՃՈՃՈԾՈՅ. յարությունը ու Սոմեցորո լուրջը անուշուղությունը պատճենաբանութեան ԽՍ-ԾՈ. 1944, ՅՅ. 064.

23 Անդ:

24 Եղվ. աշխ., լէ 067:

25 Եղվ. աշխ., լէ 070:

Ա. Կեկելիձեի դրույթը՝ «Դավթի և Տիրիմանի վկայաբանության» թարգմանատկան լինելու վերաբերյալ, բայց ընդունում է Կ. Կեկելիձեի եզրակացությունը, որ այս և «Կողացիների վկայաբանություն» երկերը նույն միջավայրի ծնունդն էն, միմյանց խիստ աղերսված, դրանք համարելով հայ քաղկեդոնականների միջավայրում ստեղծված՝ սկզբնապես իսկ վրացալեղու, ինքնուրույն երկեր²⁵:

Պրոֆ. Ի. Արուլաձեն, ինչպես երեւում է, հետագայում որևէ շափով չի վերանայել իր առաջադրած հիմնական դրույթը, ուստի այդ վկայաբանությունների ընազրերը դետեղված ենք գտնում 1964 թվականին նույն դիտնականի դեկավարությամբ ու խմբագրությամբ լույս տեսած «Հին վրացական վարքագրական մատենագրության հուշարձանների» առաջին հատորում, ուր ամփոփված են բացառապես ինքնուրույն-վրացական երկերը²⁶:

Այսպիսին է վարքագրական այս երկու ուշագրավ հուշարձանների ուսումնաժիրության և հրատարակության պատմությունը²⁷: Ինչպես տեսնում ենք, նրանց գնահատության խնդրում տարակարծությունները բավական շատ են, չանավանդ՝ թարգմանական թե ինքնուրույն լինելու հարցում: Պատճառն այն է, որ ընազրերն ուսումնաժիրող կամ հրատարակող գիտնականներին յի հաջողվել մատնացույց անել ընազրագիտական այնպիսի կովաններ, որոնք վճռական նշանակություն ունենային հիշյալ խնդիրը պարզաբանելիս: Ստորև կհամոզվենք, որ այդպիսի շնկատված կովաններ փրոք կան: Բայց մինչև այդ անհրաժեշտ է հիշեցնել, որ այդ երկու վարքագրությունների միջև ակադ. Կ. Կեկելիձեի նկատած ընդհանրությունները անհերքելի փաստեր են, իսկ պրոֆ. Ի. Արուլաձեի վկայակոչած նույնական տերմինների գործածությունը խոսում է դարձյալ ի նպաստ Կ. Կեկելիձեի եզրակացության: Կարելի էր լրացնել փաստեր վկայակոչել (օրինակ՝ նույն Յցօլյօծօ—կարել, կարողանալ բայի խոնարհման հետ կապված վրիպումը երկու տեքստերում²⁸, ծըցհօ—խաղ, խաղալ տերմինի գործածությունը²⁹ և այլն), սակայն ընդհանրությունն այնքան ակներեն է և անսպես հիմնավոր ապացուցված, որ որա անհրաժեշտությունը չկատարվել է նշանակությունուն ունենալու վեհականությունը՝ ի համար անհրաժեշտ է այդ գործերը սկզբնապես հայերեն են գրվել, թե՞ վրացերեն:

Պրոֆ. Ի. Արուլաձեն, ինչպես ասվեց, երկուսն էլ համարում էր վրացերեն գրված, վկայակոչելով հետևյալ կովանները.

²⁵ Գրքի համեմատում Ի. Արուլաձեն հրատարակել է հիշյալ երկու վկայաբանությունները՝ ընազրերը, ինչպես նաև Դավթին և Տիրիմանին ձևաված միջնադարյան ներբողյանը (նշվ. աշխ., էջ 178—183, 184—186, 199—201):

²⁶ „Ժշելո յարուցու ազողցրացուցու լարյուրանցու ժշշլյօծօ”, I, օսաձեյքօւ մռամեցը ու ածուլացը, 6. ատանելությունմա, 6. զոշցացը, լ. յաջարած, օ. ժշրւոյց-ժյօն, օ. շանյոյցմա დա օ. շլամած, ոլոր ածուլացու ծյլմծլցանցլունուտա დա հցայցլուր, ուժ., 1964, զ. 183—185, 186—191. Այսուհետեւ՝ ժշշլյօծօ”.

²⁷ «Կողացիների վկայաբանությունը» պրոֆ. Դ. Լենգի կողմից թարգմանվել է անգլերեն (տես նրա՝ Livres and Legends of the Georgian Saints, London (1956), էջ 40—43):

²⁸ „Ժշշլյօծօ”, լ. 185₁₁, 186₄₃.

²⁹ նշվ. աշխ., էջ 184₃—187₃₅:

³⁰ օ. ածուլացը, նշվ. աշխ., էջ 064,

ա) «Դավթի և Տիրիձանի վկայաբանության» հեղինակը տպրել է 860 թվականից ոչ շուտ, տայեցի է եղել, հետևաբար և՝ երկարնակ: Եթե միաբնակի ստեղծագործություն լիներ, ապա վկայաբանությունը ընդունելի կլիներ հայոց եկեղեցու համար, իսկ նրա հետքը միջնադարյան ժողովածուներում ինչ-որ կերպ կպահպանվեր: Մինչդեռ վրաց եկեղեցին հիշատակի օր է սահմանել, շարականներ ձոնել:

Նախ դիտենք, որ այս երկու վկայաբանությունների հեղինակի երկարնակի լինելու մասին ոչ մի դրվագ կամ ակնարկ չկա, ուստի ի. Արուկաձեն իր վարկածն առաջադրել է խիստ թեական ձևով, քիչ հետո ավելացնելով՝ «դավանական ինչ շրջանից էլ եղած լինի»³²: Այնուհետև՝ հեղինակի տայեցի լինելը, ինչպես այժմ պարզված է, երկարնակ համարելու բավարար հիմք չէ, քանի որ Տայքում միաբնակ հայեր կային ոչ միայն IX, այլև X—XI դարերում, որի լավագույն ապացուցքը Բոյկլասի կտակում եղած հիշատակություններն են³³. Սակայն եթե անգամ ենթադրենք, թե այս վկայաբանությունների հեղինակը իրոք հայ-քաղկեդոնական է, հիշյալ պարագան դարձյալ վրացերենով ստեղծագործելու երաշխիք չէ, քանի որ մատենագրության պատմությունից բավականաշատ միաստեր են հայտնի՝ երկարնակ հայոց շրջանում հայալեզու դրականության գոյության մասին³⁴:

Ինչ վերաբերում է սրբերի հիշատակը եկեղեցում կարգված լինելուն, ապա, կարծում ենք, այլ բացատրություն պետք է փնտրել. VIII—IX դարերից արդեն՝ Տայքը մշակութային ու դավանական, նույնիսկ մասամբ քաղաքական տռումով զգալիորեն օտարվել էր Հայ իրականությունից, ուստի այս միջավայրում ստեղծված մատենագրական երկերը տեղական շրջանակներից գժվար էին դուրս գալիս և կամ՝ ավելի շուտ վրաց ու վրացախոս հոգևոր գործիչների ուշադրությունն էին գրավում, քան Հայոց: Թիրևս այս է պատճառը, որ տեղական-տայքյան ծագում ունեցող IX—X դարերի հուշարձանները (ինքնուրույն թև թարգմանական) պահպանված ենք գտնում վրա՛ց մատենագրության մեջ և վրացերենո՞վ:

բ) Թարգմանական հուշարձաններում հայկական սոցիալական ու աշխարհագրական տերմինները փոխանցված են նույնությամբ (նախարար, զորավար, ավան...), մինչդեռ «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» մեջ այդ տերմինները վրացերեն համարժեքներով են տրված (նախարարի դիմաց՝ մտացա՞րո՞—մը ավարի կոմ წառհօնցնեցլո՞—ձարչիներուլի, զորավարի փոխարեն՝ մտացա՞րո՞—մը ավարի կոմ ցհօստացո—երիսրավի, իսկ ավանի դիմաց՝ եռցյոլո—սովելի կամ ցածր—դարա):

Այդ ամենը, իհարկե, ճիշտ է, բայց դրանք իրրե կովան կարող էին օգտագործել միայն այն դեպքում, եթե նշյալ գործածություն-համապատասխանու-

32 U.S. 1065:

33. *Sak'ia* Հ. Բարդիկյան, Եվստրաթիոս Բոլիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960,էջ 393—429:

34. Տե՛ս Ն. Ալիկնեան, Միմէռն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերենէ, Վիճնեա, 1951, էջ 224—266: Հմմ. Հ. Բարբիկյան, „Narratio de rebus Armeniacae”, Հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի Հայ-քաղկեդոնական մկրնադրյուր, «Բանքեր Մատենադարանի», № 6, էջ 457—470: Հմմ. Գ. Խուշաղյան, Վրացերեն արձանագրությունները Հայաստանում (Պղնձահանը): «Հրաբեր», 1973, № 1, էջ 39—58:

թյամբ բնորոշ լինեին միայն քննության առնվող երկու վկայաբանություններին: Ե. Արուկաձեն ինքն էլ դիտել է, թե այդ համապատասխանություններին «այլևայլ թարգմանական հուշարձաններում էլ ևնք հանդիպում»³⁵: Եվ իրոք, նույն տայրյան միջավայրում ու նույն ժամանակաշրջանում (IX—X դդ.), հայերենից վրացերեն թարգմանված «Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայրապետին և Խաղայ եպիսկոպոսին» երկում Հայերենի «Նախարար» տերմինը վեց անգամ գործածված ու թարգմանված է Ցարցա՞նօ³⁶, իսկ «Վկայութիւն սրբոյն Սանդիմոյ...» և «Վկայաբանութիւն սրբոյն Ատոմայ...» նույնավիճակ երկերում՝ Ցարհօնցօծություն³⁷: Հայերենի «զարավարը» Ցարցա՞նօ է թարգմանված «Վկայութիւն սրբոց քաւշիցն, որք վկայեցան ի Բագրեանդ գտառի ի Առևկաւետ լեառն» և «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկայ» (Համառոտ խմբագրություն) վրացերեն տեքստերում (գործածության Ցինգ դեսք)³⁸, ինչպես նաև յ՛՛օստազօ³⁹: Թարգմանական երկերում կա և «աւան» բառի Սոցյոլո համապատասխանություն⁴⁰:

Այսպիսով, մեզ զբաղեցնող երկու վկայաբանություններում հիշյալ տերմինների գործածությունը՝ նրանց ոչ թարգմանական հուշարձան լինելու ապացուց չի կարող ծառայել, որովհետև, ինչպես տեսանք, զրանք հատուկ են թարգմանական այլ երկերի ևս, և գործածվել են ըստ հեղինակի կամ թարգմանչի նախասիրության: Ուստի հարցի լուծման համար անհրաժեշտ են լեզվաբառագանձային կարգի այլ իրողություններ:

«Դավթի և Տիրինի վկայաբանության» բնագրագիտական քննությունը երևան բերեց, մեր կարծիքով, վճռական նշանակություն ունեցող նոր փաստ՝ Ալյասեղ կարդում ենք:

შენ, უფალო, ყოვლით კერძოვე
მოწყალეო და ყოველთა მწყალობე-
ლო, მამაო ობოლთაო და მსაჯულო
ქურივთაო, რომელმან მცირენი ესე
და მდაბალნი ყრმანი ესე არაა უგუ-
ლებელს-ჰყვენ და ზიარ-ჰყვენ იგინი
ნაწილსა წმიდათა მოწამეთასა, შევილ-
ნი ესე ჩემნი, რომელთა-იგი შენთვის
მრავალი ჭანჯვაა დაითმინეს და
მოილეს ზეცისა იგი გვრგვნი დაუჭ-
ნობელი და ცხორებაა იგი წარუვა-
ლი, ამათი ესე სიჩჩოსა წაშებაა,
ღირს ყვენ ესენი მათ თანა შუებასა

Դու, տե՛ր, բոլոր կողմերով ողորմած բոլորին զթացող, հայրդ որբերիու դատավոր այրիների, որ այս փոքրիկներին՝ այս խոնարհ տղաներին, շանտեսեցիր և նրանց հաղորդ արիր սուրբ նահատակների վիճակին՝ իմ այս որդիներին, որոնք հանուն քեզ բազում շարչարանք կրեցին ու երկնային անթառամ պսակ և հավիտենական կյանք ստացան՝ նրանց մանկտի այս վկայությունը, արժանի արա սրանց՝ նրանց հետ (սուրբ նահատակների) ուրախության և խրն-

35 o. აბელაძე, ზურ. მუნ., სკ 065.

³⁶ *Sēn* n. ձօղլուծյ, նշյ, աշխա., էջ 71₂₀, 72₅, 14, 74₂₁ (26), 76₁₁ (15), 29 (33):

27. *Sb' u hnejhs w2fws., t2 t16, 98₂ (6):*

32 51a-5

³⁹ *Sku* p. 287-290 ad q. *Ward*, *ms21u*, L 9 363-181.

10 Նշվ. աշխ., էջ 67: Այլևս չենք անդրադառնում «գաւառ»— եզր տերմինին, քանի որ
ի. Աբովյաձեն անհրաժեշտ ճշգրտումներ արել է (նշվ. աշխ., էջ 066—067):

და სიօნ Հულ ს 3 3 0 6 0 და მათ
თანა განსუյნებასა და მათ თანა
გვრგვნსა, მათ თანა განკურნებასა
ვნებულთასა,—ვითარცა იგინი, 08-
რეთვე ესენი⁴¹.

Բնդգծված «խնդրության մեջ» արտահայտությունը (բնագրում՝ Սօնահուլս 3060) ակներև թյուրիմացություն է, որովհետեւ նախորդ ու հաջորդ հատվածի իմաստը այս է՝ սուրբ նահատակների հետ նույն վիճակին արժանի դարձու։ Ընդ որում, «խնդրության մեջը» չի կարելի կտրել նախորդ արտահայտությունից («նրանց հետ ուրախության և...»), քանի որ նախադաս «նրանց հետ»-ին հարաբերվում է «և» շաղկապով։ Ավելին, ոչ ըստ շարադրանքի, ոչ քերականուն և ոչ էլ ոճականորեն ախնդրության մեջ» չպետք է ունենայինք, այլև՝ «արժանի արա արանց (Թավթին ու Տիրիձանին)՝ նրանց հետ (իմա՞ սուրբ վկաների—Պ. Մ.) ուրախության ու խնդրության, նրանց հետ հանգչելու, նրանց հետ՝ պսակի...»։ Եթե առաջարկվող սրբագրությունը արտացոլենք վրացերեն բնագրում, ապա այնտեղից պետք է հանել 3060-ն (մեջ)։ Արդ, բառու վրացական զրշական հիմքի վրա տեղի ունեցած աղավաղման արդյունք չի կարող լինել, քանի որ նրա փոխարեն վրացերենում առհասարակ որեւէ բառ կամ քերականական մասնիկ սպասելի չէր, գրչի հավելում կամ ընդմիջարկում ևս չի կարող լինել, որովհետեւ անտեղի ու անիմաստ կիրառություն է։ Ամեն ինչ պարզ կդառնա, եթե այն բացատրենք թարգմանության միջոցին առաջացած թյուրընկալումով։ Ենթադրյալ հայերեն տեքստում այդ հատվածի դիմաց սպասելի էր «...ընդ նոսա յուրախութիւն և ի խնդրութիւն...»։ Արտահայտության առաջին մասը շեշտում է միասնության գաղափար (ընդ նոսա...), երկրորդ՝ նպատակ, սկզբում (ի խնդրութիւն), երկու գեպքում էլ գործածված հայցականով։ Ահա, հետո այդ ի նախդիրն է, որ թարգմանիչը կարող էր ընկալել «մեջ» նշանակությամբ և փոխանցել վրացերենի։ Իսկ այսպիսի թյուրընկալում հնարավոր է միայն թարգմանության և միայն հայերենից թարգմանելու միջոցին։

Նման բացատրությունը ապացուցվում է թարգմանչի մեկ այլ վրիպումով։ Պատմելով քրոջ որդիներին հետապնդող թևեցոսի մասին, վարքագիրն ասում է, թի նա ջանահան թուածա թօնա 3060 («ղարանակալեց լեռան մեջ»), մինչեւս սպասելի էր՝ նշանակում է՝ կրկին ի նախդրի սիալ ընկալման հետ զործ ունենք (հայերենում պիտի լիներ՝ դարանամուալ ի լերինն)։

«Թավթի և Տիրիձանի վկայաբանության» վերջին հատվածում պատմվում է, որ Թավթին՝ վկայաբանության մայրը, Շահը ու կայությունը մամուռանուսատա, Սույցըլսա, Ռումելսա Յոհան Շահարան, დա թյուն Շեյսլունա. დա Սայլա 3060 մուսնուց ալմուցենեց յուրնեბասա — ռդնաց Մամրվանից Զորք (Խենի Մամորվանիսանի), Տաճարք (Տաճարանի) կուվող գյուղն ու այնտեղ հանգավ, իսկ նրա զերեզմաններն էլ բժշկության [տեղի] դարձան»⁴². Արդ, Թավթին մեկ գերեզ-

⁴¹ .Ժցլցօծում, զ. 190.

⁴² Բնագրում՝ და Սայլաշնու մուսնուց ալմուցենեց յուրնեბասա — բառացի թարգմանությամբ եկ նրա զերեզմաններն էլ բժշկության են ծնում (բունեցնում)։ Ալմուցենեց բայց (անել, բարձրանալ, բռննել, ծեր, հայտ դալ) թիրես տեղին չի գործածված։ Արդյոք այսպիս էլ որեւէ վրիպում չկա՝ (բժշկութիւն անել — բժշկութիւն անել?)։

ման պետք է ունենար (սուրբ նահատակ չէ, որպեսզի նշխարները տեղից-առել տանեին) մինչդեռ վրացերենում ևօգլազնո— գերեզմաններ է գրված: Կարծում ենք, Հոգնակի այս կիրառությունը ևս անիմաստ ու անտեղի է և բացատրելի Հայերնի Հիմքի վրա: Ենթադրյալ բնագրում, ինչպես երևում է, եղել է «գերեզման»-ի հոմանիշ և բավական հաճախ գործածվող «դիր-դիրք» բառը⁴³: Հայկական աղբյուրներում «դիրքը» երբեմն ընկալվել է իբրև անեղական և գործածվել մեկ գերեզման ցույց տալու համար⁴⁴: Անիի Սոաբելոց եկեղեցու վիմագրերից մեկում ավանդված է. «Եւ դիրք սուրբ ոսկերաց նորա բժբշկութիւն առնել ամենայն ախտաժետաց»⁴⁵, ուր դիրք-ը թե՛ եղակի նշանակությամբ է կիրառված և թե՛ համանման կոնտեքստում:

«Դավթի և Տիրիձանի վկայաբանության» թարգմանիչը «դիրքը» կարող էր ընկալել իր բուն զրոց նշանակությամբ, ծանոթ լինելով (կամ մոռանալով) նրա ունեցած կենդանի-խոսակցական գործածությանը, և թարգմանել ևօգլազնո (սափլավնի) — «գերեզմաններ»: Այսպիսի իրողություն, կրկնում էնք, հնարավոր է թարգմանության միջոցին և այն էլ հայերնից թարգմանելիս⁴⁶:

Վկայակոչված փաստերից բխում է մեկ եղբակացություն՝ «Դավթի և Տիրիձանի վկայաբանությունը» թարգմանական է, որի հայերն ընագիրը կամ մեզ չի հասել և կամ՝ դեռ երեան չի հանված: Եվ քանի որ այս երկը, ինչպես արդեն նշվեց, նույն բնույթի ու բառադրանձային առումով նույնական է չեղացիների վկայաբանության» հետ, ապա նրանք երկուսն էլ թարգմանական են: Ակադ. Կ. Կեկելիձեի կոահումները միանգամայն հիմնավոր ու արդարացի են:

Այս վկայաբանություններին անդրադարձ պիտնականները, հատկապես պրոֆ. Ի. Արուլաձեն, ասկացուցել են, որ վրացերեն առկա տերստերը IX դարից վաղ գրված լինել չեն կարող (հատկանշական է Եռօցյալու սովելի տերմինի «գյուղ» նշանակությամբ գործածությունը), իսկ քանի որ զրանք պահպանվել են X դարի վերջերին գրված գրչագրում, ապա վրացերեն թարգմանությունը կատարված պիտի լինեի IX—X դարերի միջոցին, իսկ և իսկ ժամանակակից ու բախտակից նույն ձեռագրում պահպանված և հայերնից թարգմանված մյուս հուշարձաններին: Սակայն դիտելի է, որ այս երկու հուշարձանները մասամբ տարբերվում են համարնություն մյուս թարգմանություններից (մանավանդ որոշ տերմինների հետեղական գործածությամբ), իսկ սույն պարագան թերևս այլ թարգմանչի գոյություն է հուշում, այն էլ՝ ոչ անպայման հայ-քաղ-

⁴³ «Տապան», «գերեզման» նշանակությամբ դիր-ը գործածված ներ գտնում Դվինում Հայութաբերդած VI—VII դարերի երկու տապանագրերում (տե՛ս Կ. Ղափաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 244, հմմ. Ս. Ավագյան, Բառաքենություններ վիմական արձանագրություններում, «Լրաբեր», 1971, № 4, էջ 52):

⁴⁴ ՏԵ՛Ս ՆՀԲ, 627, հմմ. աշխարհաբարի դիր-ք-եր Հոգնակին: Վրացերենում հանդիպող ևօգլազցնուն (Մարկ. Ե, 2) համապատասխանում է «գերեզմանք»-ին (Սամահունձանո), որ է վերեզմանց: Եօգլազնո ունենք XI դարի մի նմիկագրում («Ճանաչ. Սամահունձան. Ժամանակակից արձանագրություններում», «Լրաբեր», 1971, № 4, էջ 52):

⁴⁵ Դիվան Հայ վիմագրության, 1, 26:

⁴⁶ Հայկաբանության հետքեր կան այլ հատվածներում ևս անընդունակ ցույցը առ ծոված արտահայտությունը, կարծում ենք, արդյունք է հայերնի պատճենման, որ պիտի լիներ՝ ոչ ևս խոսի բնդ նմա կամ՝ ոչ ևս յաւելոյց խոսի բնդ նմա: Հայերնի պատճենում էր ենթադրում և համարակալու արտահայտությունը (աղեղինդ):

կեղոնական, ինչպես մյուսների դեպքում է: Կարծում ենք, թարգմանության ժամանակ պետք է համարել հենց IX դարը. տեքստի ուսումնասիրությունից պարզված է, որ X դարի գրչադիրը թարգմանչի ձեռադրով ստեղծված նախագաղափար օրինակը չէ, այլ ընդօրինակություն: Մեզ հետաքրքրող վկայաբանությունների հրատարակիչները գոհացել են մի քանի ուղղագրական վրիպակների սրբագրումով կամ արձանագրումով, չնկատելով «Դավթի և Տիրիձանի վկայաբանության» բնագրի երկու կարևոր խաթարում, երբ շարադրանքը անսպասելիորեն ընդհատվում է: Ահա այդ հատվածը.

Ըստ մշնջյուղացքի եռլոր ամբեջրճա ծերացարու օցո գովրուսեա և ալշա յըրուտուրու տվեսու ծերասա ծաս նեցա ցրուած մալալսա, հաշտամցա օնօլսա յըրու օցո գո ցուլուսեմա—յոմցա մոնցի օցո նուուտուսա ծուս. Ըստ ցուտարուցա օնօլսա յըրու օցո նուուլը ծուլու գո յըրուստացու մատո մթյօնարու մթյօնարու [.]. Ըստ աձա յըրու մոնցու ծացտու օցո ամծուսեա ծուս [.], հոմելու-օցո ոյմնա նուուլտա մուստա նեցա ներարուսա տացնեստա. Ըստ օլուցա ցուցայու օցո տացնե գո օլուցլուրու մտալ.

Դիվրի իշխանը գնացել է իրարանցման պատճառը հասկանալու և երբ տեսել է զորք ու զորապետ, սպասելի էր՝ կոահել է եղելությունը: Պարզ ի պարզու այդ է թելադրում կիսատ մնացած նախադասության շարագրանքը: Եարունակության մեջ հին վրացերենում պիտի ունենայինք [ջուլուսեմա-յու յմնուլու օցո մատու], որ հայերն կլինի՝ «հասկացավ նրանց կատարածը»: Երկույուն գրչության պարագայում մեր վերականգնածը մեկ տող է կազմում, իսկ որ ձեռագրերի ընդօրինակության միջոցին նման բացթողումներ հնարավոր են՝ կարելի է հավաստել տասնյակ օրինակներով: Ի դեպ, կարելի է նույնիսկ մանրամասնության մեջ մտնել՝ բացթողման պատճառը իրար հարող տողերի նույնահանդ վերջավորությունն է. հաջորդում գո աձա յըրու մոնցու ծացտու.

Վկայակոչված հատվածում մյուս բացթողումը վերաբերում է տեղանդանը. սպասելի էր, որ բնագրում ասվեր, թե բոքը գնաց հասավ այն տեղը. ուր ապրում էր թագինեն, դրանով իսկ բնական կլիներ թագինեն «վեր կենալն» ու «սարն ի վեր փութալը»: Քանի որ նախորդ հատվածներից հայտնի է, այդ բնակավայրի անունը, ուստի կարծում ենք, պիտի ունենայինք օձ յըրու մոնցու հասավ վածգան:

Այսպիսի խաթարումները կարող են պատճառաբանվել հուշարձանի՝ մինչև Աթոսի № 57 ձեռագիր հասնելը գեթ մեկ-երկու անգամ ընդօրինակված լինելով կամ զաղափար օրինակի՝ ինչ-որ շափով հնացած-մաշվածությամբ⁴⁷:

47 Ծնդօրինակության միջոցին տեղի ունեցած վրիպումով կարելի է բացատրել ձեռագրում առկա շանչանու ընթերցումը: Եփոթված են մրգլովանի Ն և Յ գրերը:

Երկու դեպքում էլ իրերի փաստական վիճակը մեղ կարող է առաջ տանել մինչև IX դարը: Բայց դա թարգմանության ժամանակին է վերաբերում և ոչ հայերեն բնագրի ստեղծմանը: Վերջինիս հետ կամված խնդիրներ արծարծելիս որոշ կովաններ է ընձեռում վկայաբանություններում նկարագրված առանձին դրվագների բննությունը: «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» տկարում ասվում է, թե նահատակությունը տեղի է ունեցել «այն ժամանակներում, երբ աշխարհակալ թագավորներ էին Հունաստանում՝ Հերակլ արքան, Հայաստանում՝ Արշակը և Պարտկաստանում՝ Վուամշապուհը»: Հայտնի է, որ Արշակի գահակալության տարիներն են 345—367/8 թվականները, Վուամշապուհինը (եթե դա Շապուհ Բ-ն է)՝ 309—379, Հերակլինը՝ 610—641: Հաջորդ պարբերության մեջ հիշատակվում է և հայոց կաթողիկոսը՝ Ներսես Մեծ (353—373): Ներկա դեպքում Հերակլի հիշատակությունը պարզ անախրոնիզմ է: Արշակի, Ներսեսի ու Վուամշապուհի (իմա Շապուհ Բ) ժամանակակից բյուզանդական հինգ կայսր է եղել (Կոստանդ, Հովհանոս Ուրացող, Հովհանոս, Վաղենտիանոս, Վաղես), բայց ոչ Հերակլը: Քանի որ երկու վկայաբանություններում էլ խոսքը տեղական հեթանոսության ու նորամուտ քրիստոնեության պայքարի մասին է, ուրեմն սխալ կարող է լինել Հերակլի անվան հիշատակությունը և ոչ շորորդ դարի վերոհիշյալ իրական անձնավորությունների: Բայց հենց այս անախրոնիզմն էլ վկայում է (իհարկե, եթե այն հետագա կամ թարգմանության ժամանակ կատարված ընդմիջարկություն չէ), որ «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը» (հետեաբար և «Կողացիների վկայաբանությունը») զրված պիտի լինի Հերակլի թագավորության տարիներից (610—641) հետո: Այդ, ինչպես նկատել է Իվ. Զավախիշվիլին, փաստվում է և մեկ այլ հիշատակությամբ. վկայաբանության վերջում Ներսես Մեծը դառնում է «մեր սույր հայր Ներսես Հայոց կաթողիկոս», որը «իշխանից տեսնում էր հրաշքը», «փութով հասնում Դիվրի»: Խշխանից գնացողը արդեն Ներսես Տայեցին է (641—661): Ինչ խոսք, միայն VII դարի երկրորդ կեսից հետո կարող էին հիշատակվել այս երկու անձինք՝ Հերակլն ու Ներսեսը: Եթե վկայաբանությունների հեղինակը ժամանակակից լիներ այդ երկուսին, կամ թեկուզ միայն Ներսեսին, ապա նրան չէր շփոթի Ներսես Մեծի հետ և ոչ էլ Հերակլին՝ Արշակի ժամանակակից կայսր կհռչակեր: Այդպիսի անտեղյակություն կամ անախրոնիզմ թույլ տալու համար նա հիշյալ դեմքերից գեթ 50—100 տարի հետո ապրած պիտք է լիներ, որի աղբյուրը ժամանակակից իրականությունը չէ, այլ սերնդից-սերունդ անցած ավանդությունը: Անտեղի կլիներ ևնթագրել, թե այս անհարթություններն առաջացել են թարգմանության ժամանակ կամ հետագա ընդօրինակությունների ընթացքում, քանի որ նման պարագայում որոշակի միտում էր ակնկալելի, ինչպիսին իրականում չկա: Կարծում ենք՝ սխալված շենք լինի, եթե եզրակացնենք, թե արծարծվող վկայաբանությունների հայերեն բնագրերի երևան գալը սպասելի է VIII դարից ոչ շուտ և ոչ քան IX դարը, երբ նրանք արդեն վրացերենի են թարգմանվել⁴⁸:

⁴⁸ Իվ. Զավախիշվիլին և Ի. Արուլաձեն վկայակոչում են ժամանակագրական ցուցում պարունակող մեկ ուրիշ փաստ ևս, որ, մեր համոզմամբ, կովան լինել չի կարող: Նահատակության անդում Դավթի ձեռքից գետին է ընկնում կաղնե ճիպոտն ու «լեռան վրա մեծ ծառ զանում»: Եվ մնաց այդ ծառը մոտ երկու նարյուր տարի, ու ուստավորները ի հիշատակ տարանաւ: Այս երկու հարյուր տարին հիշյալ դիտնականներն ընդունել են իրրե ցուցում և, ավելացնելով Ներսես Տայեցու գահակալության տարիների վրա, ստացել 860-ական թվականների նման հաշիվը ամե-

Որ սույն վկայարանություններն արժեքավոր են տեղական հեթանոսության և նոր մուտք գործող քրիստոնեության բախումներն ուսումնասիրելու առումով՝ արդեն նկատված փաստ է: Պատմական Հայոց աշխարհի սահմաններում այդ շրջանում կատարված իրադարձությունների մասին այլուստ որևէ ամփոփ տեղեկություն չունենք, ուստի քննարկվող վկայարանությունների հաղորդումները առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում: Պակաս արժեքավոր չեն նաև Տայքի պատմական աշխարհագրությանը (տեղագրությանը) վերաբերող տվյալները: Բասեանի գավառի Օնկոմ (իմա՞ Օկոմի)⁴⁹ ավանում իշխող վարդանի կինն ու զավակները, նրա մահվանից հետո ապաստանում են «Հյուսիսային կողմ»—Տայոց աշխարհում, ապատվելով Բասեանի գավառի մեկ այլ իշխանավորից՝ Թևոսից: Թագինեն հաստատվում է Տայքի Վաժգան ավանում⁵⁰, իրենց ազգական Վաղգեն (բնագրում՝ Վահգեն) իշխանի մոտ: Ուշագրավ է, որ այս երեք իշխանների միջև էլ աղղակցություն—արյունակցություն կա, իսկ վարդանն ու նրա կին Թագինեն «թագավորական տոհմից էին»: Տայքի պատմության ապագա ուսումնասիրությունը պետք է պարզի՝ սրանք պատմական-իրական գեմքեր են, թե՛ վարքագրական հերոսներ (նույնը վերաբերում է և Դիվրի կոչվող գյուղում նստող իշխանին): Արդյո՞ք նրանք բոլորը իրոք իշխաններ են՝ իրենց զորքով, ինչպես վկայարանություններում է ներկայացվում:

«Կողացիների վկայարանությունը» այսքան լայն աշխարհագրական ընդդրկում չունի. նրանում խոսվում է միայն Կող գավառում (Տայքի գավառներից առաջինը), «Կուր կոշվող գետի ակունքի մոտ» գտնվող մի գյուղի մասին: Սակայն հենց այդ միակ բնակավայրի հիշատակությունն էլ հետաքրքրական է. «Աշխարհացոյց»-ում ասվում է, որ «...Տայք... ունի գաւառու ութ. զԿող յելից կուտէ, յորմէ բղխեն աղբիւրք գետոյն Կուրայ, ի գեղջէն, որ ասի Կրի ակունք»⁵¹: Վկայարանության մեջ փաստորեն հենց այդ «Կրի անկունք—Կրակունք» գյուղն է հիշատակվում (Կուր կոշվող գետի ակունք), անվան կազմության թելաղբան-ըով մի քիչ նկարագրական ձևով:

Մասնավոր քննության առարկա կարող են լինել և Դավթի ու Տիրիձանի վկայարանության տեքստում հանգանե հիշատակված որոշ գործիշներ: Հեղինակը, եղելության ժամանակը սահմանելիս, Հայոց կաթողիկոս Ներսես Մեծի հետ միաժամանակ վկայակոշում է Աղամ Արագածոտնեցուն: Վերջինս, դատելով հիշատակության հանգամանքներից, IV դարի վրա, որից հետո հերկու հարյուր տարի դոյսենել է և ոչ՝ Տայեցու գահակալության, բանի որ վերջինիս հիշատակությունը պարզորոշ անախրոնիզմ է:

49 Արքատակես Հաստիվերտցին Օկոմի-ն կոչում է «մեծ աւան», «մարդաշատ և ընշատէտ» (Կ. Յուղբաշյանի հրատ., էջ 29, 102), հմմ. Պուկաս Խնճինեան, Ստորագրութիւն Հին Հայաստանեաց (Մեծ Հայք), Վենետիկ, 1822, էջ 385—386:

50 Վաժգան տեղանունը ստուգարանելի է իրեկ վիճական—վճական—վաժգան (վիճել—վիժան—բազմական) բառից, հմմ. Խ. Ածոնց, Արմենիա և էպոխա Յուստինիան, Երևան, 1971, ստր. 144—145):

51 Տե՛ս Ս. Սեմյան, Հայաստանը բառ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110:

րիս հեղինակին ուրիշ որևէ տեղեկություն հայտնի չէ: Անցուղարձի վայր շտապած ներսին Տայեցին (sic!) իր հետ բերում է քահանաներ՝ Հովհաննես: Սահակ, Գրիգոր: Ովքե՞ր են այս անձինք, իրո՞ք իշխանում գործող քահանաներ: Եթե ելակետ ընդունենք Հ. Աճառյանի կազմած «Անձնանունների բառարանը», ապա Թագինե անունը պիտի համարենք հայ մատենագրության մեջ շավանդված և սույն բնագրով միայն ներկայացող: Մասնավոր ուշագրության է արժանի Տիրինան անունը: Բնագրում ստուգաբանորեն վկայվում է, թե այդպես են կոչել հայերեն լեզվով (յնօտա Սոմեցեց՛օտա), իսկ «Արուեստ Դիոնիսիայ Քերականի» երկի հայերեն թարգմանիչը հունարեն Ծէօն «անուն ինչ քերդոցեալի» դիմաց դնում է Տիրինան, ակնհայտորեն ելակետ ունենալով նրա տեր բաղադրիչը⁵² և «ցանկանալով հայկականացնել հունարեն անունը»⁵³:

Բրակացու աշխատության հայերեն թարգմանության և Տայրում գրված վկայաբանության մեջ Տիրինան սակավ գործածական անվան հիշատակությունը կարող է օժանդակ ազբյուր ծառայել թե՛ քերականության թարգմանության միջավայրը որոշելիս և թե՛ վկայաբանության հետ կապված հարցեր արծարծելիս: Կարելի է նույնիսկ վարկած առաջադրել, թե վարքի հեղինակը կամ վրացերենի թարգմանողը անձնանունն ստուգաբանելիս ծանոթ է եղել Բրակացու հայերեն թարգմանության կամ նրա մեկնիշների մոտ եղած հիշյալ բացատրությանը⁵⁴:

Վարքագրական այս երկու հուշարձաններում կան և այլ բնույթի նկատառելի վկայություններ: Նրանցից մեկում, օրինակ, նյութեր կան ժառանգության իրավունքի, քեռու խնամակալության (avunculus), ապաստանության և այլ խնդիրների վերաբերյալ: Ազգագրության համար հետաքրքրական են խաշնարածությանը, մանկական խաղերին վերաբերող տեղեկությունները: Ի վերջո, երկու վարքերն ել մանուկների մասին գրված կարճառոտ ու անպատճեց պատմվածքներ են: Նրանցից կարելի է գրականագիտական մակարերումներ կատարել գործողությունների զարգացման, հոգեբանական պատճառաբանվածության, կերպարավորման և նման այլ հասկացողությունների իմաստով: Թերեւ կարելի է նյութեր հայթայթել և արարողության պատմության համար, բայց ներկա դեպքում այդ ամենի քննությունը մեր նպատակից զուրս է:

Ստորև թարգմանաբար հրապարակում ենք հիշյալ վկայաբանությունները, աշխատելով, ուր հնարավոր է, հարազատ մնալ բնագրին: Տերմինները փոխանցվում են հայերենի՝ ըստ ժամանակակից ու դրավոր վկայված համապատասխանությունների: Հատուկ անունները, բնական է, հայերենին ընտանի ձևով են տրվում, ինչպես եղել է նրանց սկզբնագրում: Որևէ նկատառում կամ տարակուսանք ունենալիս փակագծում տալիս ենք վրացերենի տառագարձությունը: Թարգմանությունը կատարված է վրացերեն տերուերի վերջին հրապարակությունից («ԺԵՂՋՅՈՒՅՈ...», Ժ. I, 1964):

⁵²Տե՛ս Հ. Ածուկ, Դիոնիսի Փրակիական և արմանական տոլկութեալներ, Պր, 1915, стр. 16.

⁵³Հ. Ածուկ, նշվ. աշխ., էջ ԱԼԽII. Անահուն մեկնիշը ընդունում է այդ ստուգաբանությունը (... ի տիրապես՝ Տիրինան), իսկ Ստեփանոս Սյունեցին այն վկայակոչում է իրեն երկու անկատար դոյականներից կազմված բարդություն (Անդ, էջ 142):

⁵⁴Հմմ. Հ. Marr, [Рец. на кн.] Դիոնիսի Փրակիական և արմանական տոլկութեալներ, издал и исследовал Н. Аծուկ, Խ. В.՝ տ. V, вып. I, Петроград, 1916, стр. 60. Անտոն կանալի է միայն, որ այսուղ Ն. Մառը Տիրինանի համարում է «արմանական վայրի պատճեաններից կազմված բարդություն» (Անդ, էջ 142):

I

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ ԵՐԿՈՒ ՍՈՒՐՅԱ ՏՎԱՎԹԻ ԵՎ ՏԻԹԻՃԱՆԻ

Այն ժամանակներում, երբ աշխարհակալ թագավորներ էին՝ Հունատանում Հերակլ արքան, Հայաստանում՝ Արշակը և Պարսկաստանում՝ Վասմշտպուհը, եղավ այս սրբերի մարմինների նվիրումն՝ ի զոհ տիրոջ:

Նրանելի Մեծն Ներսես կաթողիկոսի և Աղամ Արագածոտնեցու ժամանակներում Հայոց աշխարհի կողմերում՝ Բասեանի գավառի Օնկոմ կոչվող ավանում, ումն ավագանի և իշխան մարդ կար՝ Վարդան անունով, իսկ նրա կնոք անունը Թագինն էր: Նրանք երկուսն էլ թագավորական տոհմից էին և սուրբ երրորդության ճշմարիտ ու ուղիղ հավատ ունեին: Ապրում էին նրանք աստվածապաշտությամբ, ամենայն արժանավորությամբ և աստվածավախությամբ: Եվ աերը նրանց երկու զավակ տվեց՝ որպես ծաղիկներ գեղեցիկ, եղեմական գրախտի տունկ: Ուրախացան ծնողները, որովհետև աստված լսելի արեց նրանց ազոթքները ու երկու տղա տվեց. առաջնեկին կոշեցին Դավիթ՝ հանուն մեծն թագակիր և մարգարե Դավթի*: Այս երկրորդին նույնպես անվանակոշեցին մարգարենությամբ, քանի որ նա ևս երկնային տիրոջ կողմից վկայության թագի արժանի եղավ. թեև այս եղծելի անցավոր լաւացից: Իսկ նրա հաջորդին՝ էղբորը, հայեցի լեզվով Տիրիճան կոշեցին:

Մեծացան սրանք ուղիղ հավատով: Նրանց մոր եղբայրը Թեղոսն էր, որ հեթանոս էր ու հեթանոսների անօրեն հավատ ուներ: Եվ տակավին Դավթի ու Տիրիճանի մանկության շրջանում մահացավ իշխան Վարդան զորապետը, իսկ Թեղոս անաստվածը բռնի խլեց Վարդանի իշխանությունն իր քրոջորդուց, ինչպես նաև գրավեց նրանց ժառանգությունը: Եվ երբ այդ շար զագանը տեսավայս սուրբ տղաների վայելլությունը, մտածում էր, թե «Մի գուցե կատարելահասակ [դառնալուց] հետո նրանք հզորանան և իր հանգեալ շարություն անելու ելնեն»: Զկարողացավ սրտապնդվել, այլ առավել նենգությամբ խորամանկություն մտածեց, չզոհանալով նրանց ժառանգությունն ստանալով, ուզում էր բոլորովին ջնջել նրանց:

Իսկ արժանավորն աստծո երանելի թագիննեն լսում էր իր հանդեալ գյութած այս ողջ շարությունը: [Եղբայրն] ասում էր. «Թողեք այդ խաշեցյալի զենքը և դու ու քո որդիք ընդունեք իմ հավատը, և թող այդ տղաներն իմ որդիները դառնան, ու ես մեծացնեմ նրանց մեծ խնդությամբ և ուրախությամբ»: Իսկ երանելի կինը ամենենին շրնգունեց այդ հոգիներ խաթարող զագանի անմիտ թովքությունը, այլ ասաց նրան. «Որդիներիս այս ժառանգությունն ու նրանց հոր ողջ ստացվածքը բավէ քեզ, իսկ երկնային հոր կողմից ու աստծուց տրված այն անգողանալի զանձն ու անկալելի ժառանգությունը՝ անկարող եմ»:

Երբ կնոջը Քրիստոսի հավատի հանդեալ այսպիս հաստատուն տեսավ, այլևս շշարունակեց վերստին խոսել նրա հետ, այլ առանց իրենց մոր՝ կանչեց երանելի այդ տղաներին և որպես թե՝ քաղցր խոսրով ուզում էր նրանց զառնության փոխել: Իր անմտությամբ նույնիսկ խորհում էր, թե «Կիործեմ

* Բառացի՝ հանուն մեծն թագակիր Դավթի և մարգարե Դավթի:

ստուգությամբ այս կերպով, թե ընդունեն իմ հավատը՝ իմ հանդեպ իրենց սրտում ոխ չեն պահի»:

Բերեց նրանց, հավաքեց ու համբուրում էր՝ իրրև թե սիրով, [նա], որ նախ նրանց հոգու մահն էր տեսչում: Իսկ երբ սրանով շկարողացավ հաղթել, որոշեց ոչնչացնել նրանց և այսպես էր տում. «Դուք, որդյակներ, այժմ իմ զավակներն եք ու ես այսօր՝ որպես ձեր հայրը, և այժմ իմն էլ ձերն է: Այս միայն կատարեք իմ հանդեպ և ինչ ձեզ առեմ՝ լսեցեք ինձ, որպես սիրելի հնագանդ որդիք: Այդ հավատը, որ ձեր հայրն ուներ, թողեք, և ես ավելի լավ հավատ կտամ ձեզ»: Իսկ սուրբ տղաները լուսիթյունից հետո պատասխանեցին իրենց մորեղբորք և ասացին. «Մեզ համար բավական է այն հավատը, որ մեր հայրն էր զավանում և կպահենք այն՝ քանի դեռ այս հոգին կլինի մեր մարմինների մեջ: Իսկ հանուն աստծո սիրո և համբերության՝ այլ կերպ, առանց հավատը թողնելու, պատրաստ ենք, իրրև մեր հորը»: Եվ երբ խուզարկու [հայացքով] նայեց այդ անգութ ու քարսիրտ* թևեղոսը, քրիստոնյա ժողովողդի [առկայության] պատճառով շահնդգնեց սպանել նրանց, այլ որոշ ժամանակ թողեց, և մտադիր էր ոչնչացնել նրանց:

Այս բանն զգաց թագինեն՝ նրանց մայրը, և մտածում էր, թե ո՞ր կողմ փախչի: Վերցրեց որոշ բան ամուսնու ինչքից և իր զավակներին ու փախավ հեկավ հյուսիսային կողմ՝ զեսի Տայոց աշխարհ (Տավո երկիր): Եկավ մի ավան, որ կոշվում էր վաժգան: Այնտեղ այդ սրբերին ազգական մի փշխան կար՝ վազգեն** անունով: Եվ ապավինեցին այդ իշխանին ու, տեղի ամրության պատճառով, հուսագրվեցին իրենց մորեղբոր հալածանքից: Այնտեղ բնակվեցին ու ապրում էին աստվածապաշտությամբ, իսկ իրենց ժառանգության ու օտարության [մեջ գտնվելու մասին] շէին էլ հանդգնում [մտածել], այլ այդ սակավով ու փոքր ինչքով վին գոհանում, քանի որ նրանց խնդությունն ու հարստությունը Քրիստոսի հավատն էր: Իրենց մայրը մի քանի ոշխար ուներ, որոնց հետ զնում էին այս երանելի եղբայրները՝ զվարճանալու կամ հովվություն անելու: Ու աստծո այդ անարատ գառներն ու ճշմարիտ զոհերը ոշխարների գառների հետ էին խաղում, իսկ նրանց անարատությունը միմյանց էր փոխանցվում և արդարե վերեն աստծո մատուցման պատրաստվում:

Իսկ նրանց մորեղբայր թևեղոսը զինվում էր երփներանդ խարեւությամբ և զազանի պես շէր կարողանում թաքցնել իր զայրույթի բարկությունը: Նրա շար սրտում քենն էր՝ տղաներին իր ձեռքերից բաց թողնելու և նրանց փախուստի համար: Ռւղարկեց իր սպասավորներին ու լրտեսեց տղաների կյանքը: Հայտնվեց նրանց անմեղ արյանը հետամուտ այդ գազանին, թե «Կա մի սար՝ բարձր զագաթով, այնտեղ են բարձրանում տղաները՝ ոշխարների հետ»: Ու երբ այս՝ այսպես իրազեկ արին, բազում զորք հավաքեց և զգուշությամբ ծպտյալ եկավ ու դարանակալեց լեռան վրա, որ*** անջրդի էր: Եվ խիտ անտառ էր՝ անջրդի ու ժանտընկուզավոր:

Կանչեց մայրը երեխաներին և ուղարկեց վաժգանից ձորք (ենինի վաժգանիսանի), ինչպես Հակոբը Հովհանքիին՝ Քերրոնի հովիտներ, և ասաց նրանց. «Գնացեք, իմ որդիներ, և նայեցեք մեր սակավ [աթիվ] ոշխարներին»: Գնացին որախությամբ և սարը բարձրացան. իրար զվարճացնելու համար թոշկուում

* Բառացի՝ պղնձե ազի [ունեցող], իմա՝ աղեպինդ:

** Զեռազրում՝ վահցին:

*** Բառացի՝ քանդի:

էին և այսպես ելան-հասան այդ լեռան կատարը: Իսկ բոնակալները զարանակալել էին առյուծի պես: Եվ երբ արդեն կենտրոն եկան, ժաղացալները ձայն տվեցին, և շրջվեցին տղաները: Վեր թռավ նրանց մորեղբայր Թեղոսն ու սուրաց նրանց հանդեպ՝ կոտորելու: Իսկ անմեղ երեխաները հաց էին ուտում՝ կաթի հետ, քանի որ իրենց ոչխարները փարախ էին արել: Սարսեցին երեխաները, ահարեկվեցին և սկսեցին այս ու այն կողմ նայել՝ շհամկանալով պատճառը: Եվ [երբ] երանելի Դավիթը ճանաշեց իր մորեղբորը, սրտապնդվեց ու ուրախ դեմքով, մաքուր սրտով բնդառաջ վազեց և ընկավ իր մորեղբոր ձեռքերին: Իսկ նա ձգեց ձեռներն ու նրան առավ բազուկներին և համրուրիու փոխարեն՝ սուրբ քաշեց, տվեց ու սպանեց նրան: Ու վկայություն կատարվեց, իսկ նա (Դավիթը) անմիջապես զտավ երկնքի ճանապարհը և նահատակության պատկ առավ: Մինչ նրա ձեռքերից թռած ճիպոտը կազնի էր, որ ընկավ գետին ու լեռան վրա մեծ ծառ դարձավ: Մնաց այդ ծառը մոտ երկու հարյուր տարի, և ուխտավորները իրրե օրհնություն տարան:

Տիրիճանը երբ տեսավ իր եղբոր անողորմ մահը, վախեցավ ու շտապեց փախչել, դիմեց դեպի հովիտ, Դիվրի կոշվող զյուղից արևմուտք*, որին մարդիկ շարությամբ** են հորչործում. Ու երբ [Դիվրի] իշխանը զգաց այդ իրաւանցումը և տեսավ զինավառ առաջացող ու սրերը պարզած մարդկանց, սկսեց բարբառել ու շտապ զորք հավաքել, որովհետեւ կարծեց, թե իրեն սպանելու հն գնում: Անմիջապես նրանց քեմ կռվելու պատրաստվեց: Իսկ հետապնդողները հասան սուրբ Տիրիճանին և սպանեցին նրան: Թողեցին նրան ու իրենք ետ դարձան: Նրանց շտապ դարձր զարմացրեց իշխանին. առաջ շարժվեցին տեղացի մարդիկ և տեսան տղային՝ գետնին ընկած, ծանր վերքով վիրավոր և հոգին թե առած՝ իր արարչի մոտ գնալու: Նրանք ափսոսացին մանկահասակին և շգիտեին նրա մահվան պատճառը: Այն ժամանակ եկավ հասավ նաև Դիվրի իշխանն ու տեսավ անմեղ թափված արյունը, զարմացավ ու խիստ սարսափեց: Անմիջապես հասան և տեղացի կանայք, ու տղայի վրա մեծ լացուկոծ եղավ:

Երբ Տիրիճանին սպանողները առաջացան ու բարձրացան լեռը, իրենց զորավար թեղոսին զտան տիսուր և ամենեին անկարող տեսնելու: Սրանք ևս սարսափեցին ու շվարած մնացին: Զորականների բազմությունը ևս շփոթմունքի մատնվեց և սկսեց տրտմել ու շշմել տեսած հրաշքից: Սարսափեցին ու շկարողացան խոսել, ոչ էլ փախչել, քանի որ առնվեց նրանց առաջնորդը և գանահարվեց կուրությամբ, ինչպես երանելի այն Պողոսը, երբ դուրս եկավ նա սպավածային պատգամից:

Եվ անմիջապես ողորմածության երասանակ գրվեց նրա բերանը, որպեսզի գոնե ետ դառնա նրա վայրենացած բանականությունը և զեթ կարող լինի իր անձն զգալու՝ [թե] այդ ինչ են արել, որովհետեւ կարծում էր, թե «Անպատշաճ բան շարի, որ կոտորեցի իմ քրոջ որդիներին»: Ուստի այս մերապով էլ նմանվեց Պողոսին. նա ևս սպանեց իր քրոջ որդի Ստեփանոս Նախավկային:

Եվ Դիվրի իշխանն անմիջապես ձին թամրեց ու իր զորքերի հետ բարձրացավ այդ հույժ բարձր լեռը, որպեսզի գոնե տեսնի [այնտեղի] զորքն ու

* Բնագրում զօնացուցագ. որ կարելի էր թարգմանել նաև՝ «դեպի վար տանող»:

** Բառացի՝ դեռորդամբ:

Հասկանա իրարանցման պատճառը: Ու երբ զորքը տեսավ սարսափահար, իսկ նրանց զորապետը տրաում՝ [Հասկացավ նրանց կատարածը]: Եվ ահա, այն է՝ [Վաժգան] հասավ երանելի թագիների որդիների հանդեպ կատարված խառնակության բռթը: Վեր կացավ կինն այդ թագիներ և փութաց սարն ի վեր: Եկավ-հասավ նա երեսը ծեծելով, և իր որդիների [կորստյան] ցավից՝ զառիվերի աբղախի դժվարությունն [իսկ] շնորհցրեց նրան. ձայն էր տալիս նա լացով ու գառնացած հոգով: Պատուց հագի հանդերձն ու ասաց իր եղբայր թեղոսին. «Ինչո՞ւ հանեցիր իմ աշքերի լուսը, ինձ բավ չէ՞ր ողբալ այրիությունս, քեզ բավ չէ՞ր իմ որդիների ժառանգությունն ու իմ՝ այս աշխարհի անդնդում լինելս: Բավ չէ՞ր քեզ ամուսնուս ժառանգությունը, և անապատ եկար ու ոչխարների հետեւից գառներին կոտորեցիր, տապալեցիր այս երկու անմեղ հովիվներին, և անապատի վրա նրանց հոտը անհովիվ մնաց: Թեղո՞ս, ո՞վ անդութ զաղան, քեզ ի՞նչ շարություն էին արել իմ այս որդիները, ինչո՞ւ խավարեցրիր արես՝ օրվա առաջին իսկ ժամին, մինչև ո՞ւր շգաղարեցիր ինձ հալածելուց: Բավ չէ՞ր քեզ այս մեկը որսալ, ո՞վ շար զաղան, զոնե մեկը ինձ թողնեիր, զեթ այրիությանս խղճայիր: Հիմա էլ ինչպե՞ս, ո՞վ է լինելու իմ ապավենոր կամ իմ հույսը: Սպանիր և ինձ, ո՞վ անաստված, և հագեցիր արյամբ, ով ինձդ արյունառուշտ: Թող այլևս շգնամ այստեղից, այլ, ինչպիս որդիներիս կենդանության ժամանակ էի ուրախանում՝ նրանց տեսնելով, այժմ էլ թող մահս նրանց մահվան հետ լինի: Թող մեսնի հոգիս՝ արդարների հոգու հետ, և մեր մարմինները թող մեկ գերեզմանում լինեն, ինչպիս իմ այրիության տարիներին մեր մահին էր մեկը: Թեղոս, շիշեցի՞ր զոնե բու և իմ ծնողի արդանդը և ստինքները, որոնցով սնվեցինք դու և ես: Ո՞վ լիովին զազրելիդ, ինչո՞ւ համար այսքան զորքով դուրս եկար անդոր կնոշ ու նրա մանուկ տղաների [դեմ] կովելու: Ինչո՞ւ մարեցիր մոմերս, ո՞վ անհավատ»:

Այս ու այսպիսի և այլ՝ սրանց նման խոսքեր էր ասում երանելի թագինեն: Իսկ հավարված ողջ բազմությունը լոել ու ողբում էր և ինչպես վտակներ՝ արցունքներ թափում: Թեղոսն անդամ նրանց հետ լաց էր լինում:

Իսկ երանելի թագինեն երբ տեսավ իր սիրելի Դավիթ որդուն սպանվածընկած, աշքերը այս ու այն կողմ ընկան՝ որոնում էր իր Տիրիձան որդուն, որ թեկուզ մահացած՝ նրան էլ տեսնի: Իսկ նա այնտեղ շէր: Եվ վշտից ու նեղությունից կտրտվում էր նրա սիրաբ:

Իսկ թեղոսը շէր կարողանում հասկանալ այդ կուրությունը: Այն ժամանակ սկսեց խոսել թեղոսն ու ասաց իր քույր թագիներին. «Ո՞վ քույրդ իմ թագինեն, ինձ մոտ արի և տես, որ այսպիս՝ լիուն կատարին խավարը պատել է ինձ, ինչպիս խոր ձորերում կամ անձավում, անդունդներում: Ինձ վրա է գալիս խավար մեղք, իսկ քեզ՝ անհաս լույս պայծառափալեց՝ այն անանցողիկ լույսից ու ճշմարիտ այն հավիտենական լույսից: Իսկ այժմ իմ հանդեպ, անգութիս ու անարժանիս ողորմածություն... Եվ մի՛ հատուցիր արարքներիս համեմատ, այլ աղերսիր դու սուրբ նահատակներին, որպեսզի ողորմածություն անեն ինձ, որպեսզի այս անարժանս արժանի դառնամ ողորմած աստված Քրիստոսի կնիքին, որ հանուն մեղավորների եկավ: Հավատում եմ ևս ճշմարիտ աստծուն»:

Ու երբ [թագինեն] ուշի եկավ և տեսավ, թե աստծուն զո՞հ մատուցվեցին այդ գեղեցիկ մատաղները՝ իր որդիները, տեղնուտեղը ուրախությամբ լցվեց ու անմիջապես թոթափովեց իր որդիների ցավի վշտից: Նոյն ժամին ողբին ու-

րախություն փոխարինեց, համբուրեց իր եղբորի ու ասաց նրան. «Թող աստված թողություն տա քեզ և ողորմած տերը թող իմ որդիների ու քո քեռորդիների մահը քեզ վրա շհաշվի, ինչպես ժամանակին՝ Պողոսին՝ իր քրոջորդի Ստեփանոս Նախասարկավագի հանդեպ»:

Ազերսում էր աստծուն, [աշքերը] երկինք հառում, օրհնում տիրոջը և վայանում արցունքից, որպեսզի առ ոչինչ համարի նրա մտքի բորբոքումը, և իր բուրավետությամբ ցիրուցան լինի նրա խունկը: Կին այդ թագինե ասում էր. «Դու, տե՛ր, քոլոր կողմերով ողորմած ու բոլորին զթացող, հայրդ որբերի ու դատավոր այրիների, որ այս փոքրիկներին՝ այս խոնարհ աղանդերին, շանտեսեցիր և նրանց հազորդ արիր սուրբ նահատակների վիճակին՝ իմ այս որդիներին, որոնք հանուն քեզ բազում շարչարանք կրեցին ու երկնային անթառամ պսակ և հավիտենական կյանք ստացան՝ նրանց մանկակի այս վկայությունը, արժանի արա սրանց՝ նրանց հետ (սուրբ նահատակների) ուրախության և խնդրության, նրանց հետ հանգչելու, նրանց հետ՝ պսակի, նրանց հետ՝ շարշարանքների բժշկության, վնասի նրանք՝ այնպես էլ սրանք: Եվ որ իմացվի, թե Հաճու էր քեզ, տո՛ւր և իմ եղբորը բժշկություն, որ տեսնի»: Ու վերցրեց Դավթի արյամբ շաղված հողն ու ցիսեց նրա աշքերին: Եվ նրա աշքերն անմիշապես բացվեցին: Այս երկու սքանչելիքները կատարվեցին սուրբ Դավթի հանդեպ:

Մարդասերն աստված պարտ համարեց նաև, որ բոլոր մարդկանց հայտ առնի նրանց խիզախությունը և տեղեկացնի, թե աստվածահամ էր նրանց նահատակության այդ զոհը. այդ գիշեր փայլատակեցին լույսերը՝ ինչպես լուսատղեր, լուսե սյան տեսքով, որոնց կատարը երկինք էր հասնում, ինչ տեսնում էին աշխարհի բոլոր մարդիկ, և ովքեր գիտեին՝ փառարանում էին աստծուն, իսկ հեռու գտնվողները տեսնում էին այդ լույսը, զարմանում և միմյանց հարցուսիորձում:

Այն ժամանակ, երբ մեր սուրբ հայր Ներսես հայոց կաթողիկոսը իմացավ այս եղելությունը, քանի որ ինքն էլ իշխանից տեսնում էր հրաշքն ու անհամ լույսի [այն] փայլատակումը, որ[ով] տերը փառավորեց իր արժանավորներին, սուրբ հոգու շնորհիվ կոահեց կատարվածն ու փութով հասավ Դիվրի և հետքը քերեց Հովհան, Սահակ և Գրիգոր քահանաներին: Իսկ թեղոսն ընկավ Ներսես կաթողիկոսի ոտքերն ու խոստովանեց նրան այն բոլոր հանցանքները, որ կատարեց, և Քրիստոսի մնիք առավ, իր ողջ սրտով հավատաց մեր տեր Հիսուս Քրիստոսին և նրա բոլոր վկաներին ու սրբերին: Ազա սուրբ Ներսեսը նրանց մոր՝ Թագինեի ու Թեղոսի ներկայությամբ իր ձեռքով պատեց այդ սրբերի մարմինները: Նրանցից մեկին հողին հանձնեց լեռան վրա, մյուսին Դիվրի* ներքեսի կողմում՝ Հեղեղատի ձորից (Խելի նազուարեկսա) արևմուտք:

Եվ Թեղոսը ծախսեց ունեցվածքը և Դավթի [զերեզմանի] վրա եկեղեցի կառուցեց, պահեց ու կարգեց նրանց հիշատակը, իսկ Դիվրի իշխանը առավ Տիրիմանի սուրբ ոսկորների նշխարներն ու նա ևս եկեղեցի կառուցեց ի վկայություն այն բանի, որ կատարվեց նրա սահմաններում՝ այդիների մեջ:

Իսկ երանելի թագինեն զնաց Մամրավանից ձորը՝ Տաճարանի կոչվող գյուղը, և այնտեղ հանդավ: Նրա զերեզմանն էլ բժշկության [տեղի] դարձավ:

* Բնագրում՝ Դերի:

Մինչ Դիվրի իշխանը այլեստանների^{*} մեջ եկեղեցի կառուցեց՝ ի փառս Հոք և Որդու և սուրբ Հոգու՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

II

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՎԱՎ ԻՆԸ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԱՆՑ, ՈՐՈՆՔ ՍՈՒՐԲ ԱՎԱՋԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԷՒՆ, ԻՍԿ ԾՆՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆԶՅՈՒՐԻ, ԻՐ ՄՈՒՐԻՑ

Կուր կոշվող մեծ զետի ակունքի մոտ, Կողա կոշվող գավառում մի մեծ զյուղ կար: Այդ գյուղի բնակչության մեծամասնությունը հեթանոսական կուռքերի պաշտող էր, ժողովրդի փոքր մասը՝ քրիստոնյա, աստվածապաշտ: Եվ ինչպես երեխանների սովորությունն է, հավաքվում էին քրիստոնյանների ու հեթանոսների տղաները խաղալու ու խաղում օրն ի բուն: Իրիկնաժամին երեցը կոշնակում էր, և քրիստոնյանների երեխանները եկեղեցի էին գնում աղոթելու, ինչպես քրիստոնյանների ծեսն է, մինչդեռ հեթանոսների թվով ինը երեխանները հետևում էին նրանց, որովհետեւ ընտելացել էին քրիստոնյանների երեխաններին և սիրում էին քրիստոնեական կրոնը: Ու երբ մոտենում էին եկեղեցու դռներին, քրիստոնյանները եկեղեցի չէին թողնում, այլ այսպես էին ասում նրանց, թե՝ «Դուք կուտաշաշտների որդիներ եք, և պատշաճ չէ ձեզ մտնել տունն աստծո»: Եվ նրանք գնում էին սրտաբեկ ու ամոթվոր: Մանուկները բազմիցս էին այսպես անում:

Այնուհետև հեթանոսների երեխանները գնացին քրիստոնյանների եկեղեցի և ցանկացան նրանց հետ, հարկադրելով, ներս մտնել: Այն ժամանակ քրիստոնյաններն ասացին. «Եթե ուզում եք մեզ հետ եկեղեցի մտնել, հավատացեք մեր տեր Հիսուս Քրիստոսին և մկրտվեցեք հանուն նրա, հաղորդվեցեք նրա խորհուրդներին և միացեք քրիստոնյաններիս»:

Նրանք տեղնուսեղը ուրախությամբ ընդունեցին քրիստոնյանների խրատն ու խոստացան այդպես անել: Շտապ գնացին քահանայի մոտ, որն այդ գյուղի երեցն էր, աղնիվ արժանավոր ու հարգարժան մարդ, և հայտնեցին նրան երեխանների արարքը: Իսկ նա հիշեց Ավետարանի այն խոսքը, որ ասաց տերն մեր Հիսուս Քրիստոսը. «Որ ոչ թողու զհայր իւր և զմայր իւր, զքեռս և զեղրայրս, զկին և զորդիս և ոչ առնու զխաշ իւր և զայ զկնի իմ» չէ ինձ արժանի»^{**}:

Այն ժամանակ քահանան գնաց այդ մեծ զետի ակունք և նրա հետ՝ քրիստոնյանների բազմություն: Հեթանոսների երեխանները ևս նրանց հետ էին: Զմեռ ժամանակ էր և ցուրտ գիշեր, քանի որ հեթանոսների ահից ցերեկը շէր կարող հանդգնել մկրտել նրանց և [ապա]՝ տերն մեր Հիսուս Քրիստոսը և Հորդանան զետում Հովհաննեսի կողմից գիշերը մկրտվեց: Զուրը բարկ սառնություն էր տալիս: Եվ երբ այդ երեխանները զետը մտան, երեցը մկրտեց՝ հանուն Հոք և Որդու և սուրբ Հոգու, այս աղոթքն (ժամոքա) ասելով «Առոք Հոգին իբրև աղավնի իջավ Հորդանանի վրա, երբ Քրիստոսն էր մկրտություն առնում, հրեշտակները մոտն էին կանգնած [ու] այս շարականն էին ասում. ալելույա» զուրն այն ժամանակ շատ տաքացավ, ինչպես բազանիք, և

* Բառացի՝ խաղողների (որթատունկերի) մեջ:

** Հմմ. Մատթ., Ժ, 37—38:

տառձու հրամանով հրեշտակները երկնից սպիտակ զգեստներ պարզեցին և մարդկանցից աննկատ հազրին այդ նոր մկրտյալ մանուկներին։ Իսկ այն քրիստոնյա երեխաները նրանց կնքահայր եղան։ Եվ մկրտված տղաներն այլևս չդարձան իրենց ծնողների մոտ, այլ մնացին քրիստոնյաների մոտ և նրանց հետ եղան։

Որոշ ժամանակ անց, նրանց ծնողներն զգացին այս եղելությունը, և մեծ արամարհանքով ու բարկությամբ, զայրութով ու պարսավանքով բռնի փախցրին տղաներին քրիստոնյաների տներից և տարան իրենց տուն։ Ճեղքեցին նրանց զլուխները, սաստիկ ծեծով կապտացրին նրանց մարմինները։ Մինչդեռ նրանք միայն այսքանը պատասխանեցին ու ասին իրենց ծնողներին։ «Մենք քրիստոնյաներ ենք և պատշաճ չենք, որ անգամ ուտենք կամ խմենք կոոց մատուցվածից»։ Ու տղաները յոթ օր առանց ուտելու և խմելու մնացին, ոչինչ շճաշակեցին, այլ սնվեցին սուրբ հոգու կողմից, որ զգեցան մկրտության ժամանակ։ Այն ժամանակ նրանց ծնողները խոստանում էին ամենայն բարիք ու գույնզգույն խայտարդետ հագուստ, իսկ նրանք նույն խոսքն էին ասում, թե «Մենք քրիստոնյաներ ենք և ձեզնից ոչինչ չենք շենք ուզում, այլ թողեք մեղ, որ զնանք քրիստոնյաների մոտ»։

Եվ երբ անկարող եղան [կոտրել] նրանց ամուր հավատը, գնացին այն ժամանակվա իշխանի մոտ, որովհետեւ նա ևս հեթանոս էր, և հաղորդեցին ողջ եղելությունն ու մանուկների արարքը։ Իսկ իշխանն ասաց նրանց. «Չեր որդիներն են, ձեռնհաս եք, արեք՝ ինչ կկամենաք»։ Նրանք ասացին. «Հրամանքդ արդ մեզ հետ, քարկոծ կանենք նրանց, որպեսզի ուրիշները շրնդօրինակեն նրանց և քրիստոնյա դառնան»։ Ոչ պակաս նեղություն հասցրին և երեցին. ավար վերցրին նրա ողջ ինչը և [իրար մեջ] բաժանեցին նրա ունեցվածքը։ Սանր վերք հասցրին նրա զլխին, քիչ մնաց անգամ սպանեին, և վտարեցին նրան իր բնակությունից։

Այն ժամանակ այդ սուրբ վկաների շարշարանքի օր նշանակեցին։ Դուրս եկավ իշխանը և նրա հետ՝ ժողովրդի անթիվ բազմություն։ Եվ եկան աղքերակոմք, ուր մկրտություն առան այդ սուրբ մանուկները, հույժ խոր գուր փորեցին, իսկ նրանց ծնողները բերին այդ սուրբ մանուկներին ու զցեցին գրի մեջ։ Նրանցից ոմանք ինը տարեկան էին և ոմանք՝ յոթ կամ՝ ավելի կամ պակաս։ Ուրիշ ոչինչ շգիտեին, որ գոնե ասեին, միայն այս էին ասում. «Մենք քրիստոնյաներ ենք և հանուն նրա էլ կոտորվում ու մեռնում ենք, հանուն որի մկրտություն առանք»։

Այն ժամանակ անաստված ծնողները շարդեցին նրանց զլուխներն ու քարկոծ արին։ Օձերն ու իժերը, զազանները գութ գիտեն ձագերի հանդեպ, իսկ այս անհավատները շգթացին իրենց երեխաններին։ Ու հավաքված բազմությունը քար շպրտեց, մինչև լցվեց գուրը, և քարով ծածկվեցին նրանց սուրբ մարմինները, իսկ փորված հողը լցրին վրան։ Այնժամ կատարվեց ավետարանի խոսքը. «Մատնեսց եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և հառնիցն հայր ու մայրը ի վերայ որդուց և սպանանիցն զնոսա»*։

Եվ կատարվեց նրանց նահատակությունը, ու նրանք անցան նախավկաների թիվը և նրանց հետ պսակ առած հրճվում են երկնային արքայությունում՝

* Հմմ. Մատթ. Ժ, 21, Մարկ., ԺԴ, 12:

մեր տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որին վայել է փառք ու պատիվ և երկրապահություն՝ ընդ Հոր և սուրբ Հոգու, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից, ամեն:

Պ. Մ. ՄՈՐԱԴՅԱՆ

ДВА НЕСОХРАНИВШИХСЯ В АРМЯНСКОМ ОРИГИНАЛЕ АГИОГРАФИЧЕСКИХ ПАМЯТНИКА

(Резюме)

Выявленные Н. Я. Марром в афонской рукописи № 57 (по Р. Блейку—№ 8) агиографические памятники „Мученичество Давида и Тиричана“ и „Мученичество девяти отроков колайцев“ не раз подвергались историко-филологическому исследованию. По мнению Н. Я. Марра, первый из них „несомненно армянского происхождения“, а второй, возможно, представляет собой оригинальное грузинское сочинение. К аналогичному же заключению пришел и И. А. Джавахишвили, в то же время отрицая их сюжетно-стилистическую общность. И. В. Абуладзе, в отличие от Джавахишвили, доказал общность встречающейся в данных памятниках терминологии, признавая их агиографическими сочинениями, возникшими в армянской халкедонитской среде. К. С. Кекелидзе доказывал несомненную общность сюжета и слога этих памятников, считая, что либо оба они оригинальные грузинские сочинения, либо переведенные с армянского. Сам он был склонен ко второму заключению.

Проведенный нами текстологический анализ выявил ряд новых доказательств, подтверждающих их перевод с армянского: дважды встречающееся в тексте Յօբ (Յօբա՛րսյա Յօբ և Յօբա Յօբ) представляет неточный перевод арм. ի, а ми. число слова Յօվլազբօ вызвано буквальным переводом арм. термина գիրք. Эти и другие арменизмы позволили установить, что рассматриваемые памятники, оригиналы которых не дошли до нас, переведены с армянского. Установлены также некоторые лакуны в тексте „Мученичества Давида и Тиричана“ и предложены корректизы. В работе определенное место уделено вопросам хронологических рамок составления армянских текстов и их перевода на грузинский язык (VIII—IX вв.).

Оба эти памятника содержат интересные материалы по истории распространения христианства в Армении, в частности, в области Тайк (груз. Тао). Они одинаково важны для изучения наследственного права в древней Армении, культа дяди (авункулат), некоторых этнографических вопросов и т. д. К тому же в них содержатся сведения по исторической географии и административному делению края, по ономастике (Тагинэ, Тиричан), вместе с тем названы лица (Адам из Арагацотна, князья Вардан и Вазген), не известные по другим источ-

никам. Весьма любопытен факт упоминания имени „Тиричан“ в мученичестве и в армянском переводе сочинения Дионисия Фракийского.

В заключение ставится ряд вопросов, требующих дальнейшего специального исследования, и прилагается армянский перевод текстов.

P. M. MOURADIAN

DEUX OUVRAGES HAGIOGRAPHIQUES DONT L'ORIGINAL ARMENIEN A DISPARU

(Résumé)

Les ouvrages hagiographiques „Le Martyre de David et de Tirlchan“ et „Le Martyre des Neufs Adolescents de Kola“ découverts par N. Marr dans le manuscrit № 57 d'Atos (d'après R. Blake № 8) ont fait plus d'une fois l'objet de recherches historico-philologiques. D'après N. Marr le premier est „incontestablement d'origine arménienne“, tandis que le deuxième présente, peut-être, une œuvre originale géorgienne. I. A. Djavakhichvili en est venu à une conclusion semblable, tout en niant leur communauté de sujet et de style. I. V. Abouladzé, au contraire, a démontré la communauté de la terminologie de ces ouvrages, les reconnaissant pour des œuvres hagiographiques parues dans le milieu des Arméniens Chalcédoniens. K. S. Kékélidzé démontre la communauté incontestable du sujet et du style de ces ouvrages les tenant soit pour des œuvres originellement géorgiennes, soit pour des traductions faites de l'arménien. Lui-même penchait à la seconde conclusion.

L'analyse textologique partagée par l'auteur a fait paraître un certain nombre de preuves nouvelles confirmant le fait de la traduction de l'arménien: les mots Յօն („Նօնանցլես Յօն“ et „Յօնաս Յօն“) se rencontrant deux fois dans le texte sont la traduction inexacte de l'arménien „Նօնանցլութեան“ et le pluriel du mot est le résultat de la traduction à la lettre du terme arménien «*զիրը*». Ces arménismes et d'autres encore ont permis d'établir que les ouvrages en question ont été traduits de l'arménien et leurs originaux ne sont pas arrivés jusqu'à nous. L'auteur a découvert également certaines lacunes dans le texte du „Martyre de David et de Tirlchan“ et propose des correctifs. Les questions de limites chronologiques de la composition des textes arméniens et de leur traduction en géorgien (VIII^e—IX^e ss.) ont trouvé une place déterminée dans ce travail.

Tous les deux ouvrages comportent des matériaux intéressants concernant la propagation du christianisme en Arménie, en particulier dans la région de Taïk (Tao en géorgien). Ils sont également importants pour l'étude du droit d'héritage en Arménie ancienne, du culte de l'oncle (avunculus), de quelques questions ethnographiques, etc. En outre ils

renferment des renseignements sur la géographie historique et les divisions administratives de la région, l'onomastique (Taghiné, Tiritchan) et l'on y trouve des noms de personnes (Adam d'Aragatzotn, les princes Vardan et Vazguen) non mentionnés dans d'autres sources. La mention du nom Tiritchan dans le Martyre et dans la traduction arménienne de Denys de Thrace est assez curieuse.

En conclusion l'auteur pose un certain nombre de questions exigeant une étude spéciale et donne les traductions arméniennes des textes.